ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՍՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Նազենի Ղարիբյան

Մարիամ Գիգոյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ մշակույթի նախարարի պարտականությունները կատարող

ՀՀ մշակույթի նախարարության արտաքին կապերի վարչության առաջատար մասնագետի պաշտոնակատար

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Վենետիկ (Իտալիայի Հանրապետություն)

2019 թվականի մայիսի 8-11-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Վենետիկի Բիենալեի կոմիտե

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Վենետիկի Բիենալե 58-րդ միջազգային արվեստի ցուցահանդեսին:

Ս. թ. մայիսի 8-11-ը գործուղման էինք մեկնել Վենետիկ՝ մասնակցելու Վենետիկի Բիենալե 58-րդ միջազգային արվեստի ցուցահանդեսին և կազմակերպելու տվյալ ցուցահանդեսին հայաստանյան ազգային տաղավարը:

Մայիսի 8-ին ժամանեցինք Վենետիկ, որտեղ հայաստանյան տաղավարը ներկայացնող «Հեղափոխական սենսորիում» նախագծի համադրող Սուսաննա Գյուլամիրյանը, զարգացման պատասխանատու Թինա Շաքարյանը և արվեստագետները (Հովհաննես Մարգարյան, Վարդան Ջալոյան, Արթուր Պետրոսյան, Գագիկ Չարչյան, Նարինե Առաքելյան) և ձայնային մասնագետ Ջոզեֆ Զաքարյանը արդեն իսկ սկսել էին հայաստանյան տաղավարի նախապատրաստական աշխատանքները:

Հայաստանյան տաղավարը կազմակերպվել էր Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի (Palazzo Zenobio) տարածքում և բաղկացած էր 3 մասից՝ 2018 թ. Հայաստանում տեղի ունեցած Թավշյա հեղափոխության տեսահոլովակներից բաղկացած ինստալյացիաներ, հեղափոխության վերաբերյալ առանձնացված սենյակում ցուցադրվող չորս տարբեր վերլուծությունների տեսահոլովակներ և կանանց անհնազանդության կաթսա-շերեփ ակցիա:

Մայիսի 8-ին և մայիսի 9-ի առավոտյան կատարեցինք տաղավարի պատրաստման աշխատանքները:

Մայիսի 9-ին ժամը 14:00 բիեննալե կոմիսսիան (Ստեֆանի Ռոզենտալը, Դևենա Այասը, Քրիստիանա Քոլուն, Սունջունգ Քիմը և Համզա Ուոլքերը) այցելեցին հայաստանյան տաղավարը, ծանոթացան նախագծի հետ, լսեցին նախագծի պատմությունը և հայեցակարգը:

Նույն օրը ժամը 17:00 տեղի ունեցավ Վենետիկի 58-րդ արվեստի միջազգային բիենալեի հայաստանյան տաղավարի պաշտոնական բացումը, որին ես հանդես եկա բացման խոսքով, ինչից հետո ելույթ ունեցավ նաև նախագծի համադրող Սուսաննա Գյուլամիրյանը: Տաղավարի բացմանը ներկա էին Պոլ Կիրակոսյանի հիմնադրամի նախագահ Մանուելլա Կիրակոսյանը, բրիտանանբնակ արվեստագետ և համադրող Նաիրի Սահակյանը, “Thomas Heneage Art Books” կազմակերպության հիմնադիր Թոմաս Հենիջը, «The Sterling and Francine Clark Art Institute» կազմակերպության ներկայացուցիչ Սյուզան Ռոեփերը, Մխիթարյան միաբանության ներկայացուցիչները և

այլ հայ, սփյուռքահայ և օտարազգի արվեստագետներ, համադրողներ և արվեստասերներ:

Հաջորդ օրը՝ մայիսի 10-ին, առավոտյան Հայաստանյան տաղավար այցելեց Մխիթարյան միաբանության անդամ, վարդապետ Հայր Լևոն Զեքիյանը, ում հետ միասին շրջեցինք տաղավարով և քննարկեցինք Մխիթարյան Միաբանության, Մուրադ Ռաֆելյան վարժարանի և ՀՀ մշակութի նախարարության միջև հետագա համագործակցության հեռանկարները:

Նույն օրը հայաստանյան տաղավար այցելեց նաև Վրաստանի պատվիրակության կազմում Վենետիկ ժամանած Վրաստանի Գյոթեի ինստիտուտի տնօրեն Բարբարա վոն Մունքաուսենը, ում հետ ծանոթացել էի Վրաստանում տեղի ունեցած Եվրոպական մշակութային օրերի ծրագրի շրջանակներում մշակութային համաժողովի ընթացքում:

Կեսօրից հետո հայաստանյան պատվիրակության հետ այցելեցինք Վենետիկի Ժարդինիի և Արսենալեի տարածքներում գտնվող հիմնական ազգային տաղավարները (մասնավորապես՝ Իտալիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Ֆիլիպինների, Ռուսաստանի Դաշնության, և այլն, ինչպես նաև տարբեր արվեստագետների միջազգային ցուցահանդեսը:

Նույն օրը ներկա գտնվեցինք նաև Վրաստանի ազգային տաղավարի բացմանը, որը ներկայացնում էր «REARMIRRORVIEW, Simulation is Simulation, is Simulation, is Simulation» նախագիծը:

Մայիսի 11-ին տեղի ունեցավ Վենետիկի 58-րդ արվեստի միջազգային բիենալեի Ոսկե առյուծ մրցանակաբաշխությունը, և ժյուրին Ոսկե Առյուծ մրցանակը շնորհեց Լիտվային՝ Sun & Sea (Marina) նախագծի համար: Հատուկ մրցանակի արժանացավ Բելգիան՝ Mondo Cane նախագծի համար:

Նույն օրը վերադարձանք Երևան:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Մասնակցություն Վենետիկի Բիենալե 58-րդ միջազգային արվեստի ցուցահանդեսին:
2. Միջազգային հարթակում Հայաստանի պաշտոնական ներկայացում:
3. Սփյուռքի հետ մշակութային կապերի խթանում:
4. Իտալիայի և այլ մասնակից պետությունների հետ մշակությաին կապերի խթանում:
5. Մասնագիտական և գործընկերային կապերի ստեղծում:

13.05.2019

Նազենի Ղարիբյան